ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-393-22.11.2013-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասում «ընտրվելուց» բառը փոխարինել «լիազորությունները ստանձնելուց» բառերով:

Հոդված 4. Օրենքի 53-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 53. Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը.

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում՝ դրա մեջ կատարում փոփոխություններ և (կամ) լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների կեսից ավելիով: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի

առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են.

1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.

2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.

3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.

4) աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ.

5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ.

Մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ միասին համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվությունից հետո, մեկ ամսվա ընթացքում, քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների (եթե դրանք ձևավորված են) կողմից:

Սույն օրենքի 77.2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մարմինը մշակում և համայնքների ղեկավարներին է ներկայացնում համայնքի քառամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Հոդված 5. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետից հանել «տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկ» բառերը:

Հոդված 6. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 84-րդ հոդվածի 10-րդ մասը:

Հոդված 7. Օրենքի 85-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «նորընտիր» բառն առաջարկում եմ հանել, իսկ «երկամսյա» բառը՝ փոխարինել «եռամսյա» բառով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Նույն պարբերությունում «մեծամասնությամբ» բառը առաջարկում եմ փոխարինել «կեսից ավելիով» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Առաջարկում եմ օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը երկարաձգել:	Ընդունվել է	Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2016 թվականի հունվարի 1-ը
	Առաջարկում եմ նախագծում ներառել դրույթ, համաձայն որի՝ ուժը կորցրած կճանաչվի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 10-րդ մասը	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Մարգարյան	Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «երկամսյա» բառն առաջարկում եմ փոխարինել «եռամսյա» բառով	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող 53-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում նախատեսել դրույթ, համաձայն որի՝ համայնքի ~~ավագանին մասնակցում է համայնքի քաղաքա~~ զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին:	Չի ընդունվել	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում դրված տրամաբանությամբ՝ համայնքի ղեկավարը մշակում է, իսկ ավագանին հաստատում է որոշակի փաստաթղթեր՝ համայնքի բյուջեն, աշխատակազմի և բյուջետային

ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Շահգելդյան			հիմնարկների կանոնադրությունները, համայնքի քաղաքաշինական փաստաթղթերը և այլն: Բայց դա բոլորովին չի արգելում ավագանուն մասնակցել այդ փաստաթղթերի մշակման աշխատանքներին: Բացի այդ, նշված օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ: Նույն օրենքի 33.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը «կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին»:
	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող 53-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվող բաղադրիչների ցանկը լրացնել «միջազգային կապերի զարգացմանն ուղղված միջոցառումները» դրույթով	Չի ընդունվել	Նշված դրույթը, մեր կարծիքով, չափազանց կարևոր է համայնք-ների զարգացման համար: Ներկայումս, բազմաթիվ համայնք-ներ (հատկապես՝ խոշոր) համա-գործակցում են այլ երկրների հա-մայնքների հետ, ներգրավված են տարատեսակ միջազգային ծրագ-րերի մեջ, և ՀՀ օրենսդրությունը ոչ մի կերպ չի խոչընդոտում դրան: Սակայն նշված դրույթը կիրառելի չէ փոքր համայնքների համար, իսկ մեր կողմից նշված 5 պարտադիր

			բաղադրիչներն ընտրվել են իրատեսության և բոլոր համայնքների կողմից կիրառելիության սկզբունքներից ելնելով:
	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող 53-րդ հոդվածի 4-րդ պարբերության 3-րդ կետում «համայնքում գործարար միջավայրի բարելավմանն» բառերից հետո լրացնել «և աշխատատեղերի ստեղծմանն» բառերը	Չի ընդունվել	Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքներից մեկը լինելու է աշխատատեղերի ստեղծումը, և այստեղ, մեր կարծիքով, նպատակահարմար չէ թվարկել նշված միջոցառումների բոլոր արդյունքները:
	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող 53-րդ հոդվածի 4-րդ պարբերության 4-րդ կետում «աղետների ռիսկի կառավարման» բառերից հետո լրացնել «և քաղաքացիական պաշտպանության» բառերը	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածը խմբագրել, քանի որ 2-րդ և 3-րդ մասերի դրույթները կրկնվում են:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն: